

ՕՔՍԱՆԱ ԴԻԼԲԱՆԴՅԱՆ
ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների
ծառայության գլխավոր մասնագետ, ԵՊՀ քաղաքացիական դատավարության
ամբիոնի ասպիրանտ

OXSANA DILBANDYAN
Chief Specialist at the Legal Expertise Service of the RA Court of Cassation,
PhD Student at YSU Chair of Civil Procedure

ОКСАНА ДИЛБАНДЯН
Главный специалист службы правовой экспертизы аппарата
Кассационного суда РА, Аспирант кафедры
гражданского процесса ЕГУ

ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ

THE ISSUES OF EXERCISING THE RIGHT TO APPLY TO COURT IN CASES OF CHALLENGING THE LEGALITY OF NORMATIVE LEGAL ACTS

ВОПРОСЫ РЕАЛИЗАЦИИ ПРАВА НА ОБРАЩЕНИЕ В СУД ПО ДЕЛАМ ОБ ОСПАРИВАНИИ ЗАКОННОСТИ НОРМАТИВНО-ПРАВОВЫХ АКТОВ

Սահմանադրությամբ¹ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով² (այսուհետ՝ Կոնվենցիա) նախատեսված անձի իրավունքների խախտումների դեպքում արդյունավետ իրավական պաշտպանության երաշխիքներից է դատարան դիմելու իրավունքը: Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների, ինչպես նաև օրինական շահերի պաշտպանության խնդրով յուրաքանչյուր ոք իրավունք ունի դիմել դատարան: Դատական պաշտպանության իրավունքն ինքնանպատակ չէ, այն ունի հստակ խնդրանքային կետ, առաքելություն և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից առաջնահերթ կարևորություն ունի այն հարցի պատասխանը, թե որքանով է հասանելի արդարադատությունը, որքան արդյունավետ են անձի խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի իրաց-

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում հոդ. 1118:

² Տե՛ս ՀՀՊՏ 2002.06.05/17(192), Հոդ. 367:

ման պայմանները և գործիքակազմը: Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման լիարժեք երաշխավորումն անձի Սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու առաջնահերթ իրավական նախապայմաններից է³:

Վարչադատավարական կառուցակարգերը նախևառաջ պետք է լիարժեքորեն ապահովեն մարդու իրավունքների և ազատությունների՝ որպես հիմնական սոցիալական արժեքի պաշտպանությունը, ընդ որում՝ բացառապես սահմանադրաիրավական և կոնվենցիոն պահանջներին ու որակներին համապատասխան: Վարչական դատավարությունում անձի դատական պաշտպանության սուբյեկտիվ իրավունքի իրացման տեսանկյունից կարևորվում է դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակի հատկորոշումը: Խոսքն այս կամ այն իրավունքը մի որոշակի անձի վերագրելու մասին է: Իրավունքը մի որոշակի անձի վերագրելը (իրավունքի սուբյեկտ) կարևոր է իրավունքները դատարանում պաշտպանելու թույլատրելիության համար: Դրա ընդհանուր նախապայմանն այն է, որ նորմն առնվազն հետապնդում է նաև հայցվորի շահերի պաշտպանության նպատակ **(պաշտպանիչ նորմ)**⁴:

Այսինքն՝ վարչական դատավարության օրենսդրությամբ դատարան դիմելու իրավունքը ֆորմալ կերպով որոշակի անձանց վերապահված լինելը վերջիններիս իրավունքները դատական կարգով պաշտպանելու հնարավորության և թույլատրելիության նախապայմաններից է:

Անձի դատական պաշտպանության Սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից⁵:

Վերը նշվածը վկայում է օրենսդրական մակարդակում դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի և այդ իրավունքի իրացման համար անհրաժեշտ նախադրյալների ամրագրման՝ պետության պոզիտիվ պարտականության կատարման անհրաժեշտության մասին: Այլ կերպ ասած՝ անձի սուբյեկտիվ իրավունքը (օրինական շահը) դատական կարգով պաշտպանելու կառուցակարգերը պետք է օրենսդրական կարգով ամրագրված լինեն:

Վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը սահմանվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի⁶ 3-րդ հոդվածով, որը թերևս առավել հաճախակի օրենսդրական փոփոխությունների և լրացումների ենթարկված հոդվածներից է: Նշված հոդվածի կապակցությամբ օրենսդրական բարեփոխումները մեծ մասամբ պայմանավորված են անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրացման համար նախապայմաններ ստեղծելու անհրաժեշտությամբ: Այդուհանդերձ վկայակոչված օրինադրույթի բովանդակային վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ օրենսդիրը վարչադատավարական կարգով պաշտպանության ենթակա է դիտարկում քաղաքացիների ու իրավաբանական անձանց այն իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, որոնց խախտումը վարչական ակտերի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի գործողության կամ անգործության հետևանքն է, մինչդեռ ակներև է, որ սրանցով չեն սպառվում վարչարա-

³ Տես ՀՀ Սահմանադրական դատարանի 12.07.2016 թվականի ՍԴՈ-1293 որոշումը:

⁴ Տես *Hufen*, Staatsrecht II: Grundrechte, 2018, para.5 Rn. 2, էջ 51:

⁵ Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ5/0118/05/19 վարչական գործով 18.11.2021 թվականի որոշումը:

⁶ Տես ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1, Հոդ.1186.1: Ընդունվել է 05.12.2013 թվականին և ուժի մեջ է մտել 07.01.2014 թվականին:

րության բոլոր դրսևորումները: Օրենսդիրը որպես վարչարարության դրսևորման ձև է դիտարկել նաև նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ եզրափակվող վարչարարությունը, ինչը, սակայն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հիշատակված նորմում համարժեքորեն արտահայտված չէ⁷:

Հարկ է նշել, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը բազմաթիվ որոշումներով անդրադարձել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով ամրագրված կարգավորմանը՝ արտահայտելով հետևյալը իրավական դիրքորոշումները.

- «(...) դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են»⁸.
- «(...) վարչական արդարադատություն հայցող անձանց կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված վարչական գործերից յուրաքանչյուրով պետք է պարզվի՝ արդյոք հայցվորը հանդիսանում է դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ, այսինքն՝ «շահագրգիռ անձ», քանի որ միայն իրավական շահագրգռվածության առկայության պարագայում անձը կարող է ակնկալել իր խախտված իրավունքների դատական պաշտպանություն»⁹.
- «(...) վարչական արդարադատություն, բացառությամբ նույն օրենսգրքով սահմանված դեպքերի, կարող է հայցել միայն այն անձը, ով հանդիսանում է դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ, կամ այլ կերպ ասած՝ այն անձը, որի սուբյեկտիվ իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել»¹⁰.
- «(...) «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և գործը քննող դատարանն իրավասու է գնահատելու այս հասկացությունը յուրաքանչյուր գործով՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները և պարզելով, թե արդյոք տվյալ անձն ունի իրավական շահագրգռվածություն, թե՛ ոչ»¹¹.
- «(...) դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ»¹²:

Դատարան դիմելու սուբյեկտիվ իրավունքի կարևոր հատկանիշ է գործնականում դրա իրացվելիությունը, որի առաջնահերթ նախապայմանը օրենսդրությամբ անձին նման իրավունքի վերապահումն է: Այսինքն՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի սուբյեկտային առաջին նախադրյալն օրենսդրությամբ տվյալ սուբյեկտին՝ վարչական դատարան դիմելու իրավունքի վերապահումն է: Դատարան դիմելու իրավունքին ներկայացվող վերոգրյալ ընդհանուր նախադրյալների սահ-

⁷ Տես Տ. Խաչիկյան, Հ. Քեղկյան, Ա. Ղարսյան, Տ. Մարկոսյան, Ե. Խունդկարյան, Վ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարություն, Գիրք առաջին / - Եր., «Հայրապետ» իրատ., 2022, էջ 30:

⁸ Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0909/05/10 վարչական գործով 05.04.2013 թվականի որոշումը:

⁹ Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/9190/05/13 վարչական գործով 27.11.2015 թվականի որոշումը:

¹⁰ Տես նույն տեղում:

¹¹ Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով 26.12.2014 թվականի որոշումը:

¹² Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6403/05/12 վարչական գործով 08.05.2014 թվականի որոշումը:

մանձանը զուգահեռ, նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վարույթը կարգավորող իրավանորմերը սահմանում են նշված վարույթին բնորոշ հավելյալ նախադրյալներ, որոնց առկայության դեպքում միայն անձը կարող է իրացնել վարչադատավարական օրենսգրքով նախատեսված դատական պաշտպանության նշված ձևը:

Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման վարույթը սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության առանձնահատուկ ձև է: Ըստ այդմ, օրենսդիրը սահմանել է նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու իրավունքը կրող սուբյեկտների սպառիչ ցանկ: Օտարերկրյա օրենսդրական կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ նմանօրինակ մոտեցումը լայնորեն տարածված է: Օրինակ՝ Լիտվայի Հանրապետության վարչադատավարական օրենսդրությունը ևս նախատեսում է սուբյեկտների սպառիչ ցանկ, որոնք իրավունք ունեն դիմել վարչական դատարան՝ նորմատիվ իրավական ակտի օրինականությունը վերանայելու միջնորդությամբ: Հետևաբար, նորմատիվ իրավական ակտի իրավաչափության վիճարկման պահանջով վարչական դատարան դիմելու իրավունքը համընդհանուր չէ¹³: Ավելին՝ Լիտվայի գերագույն վարչական դատարանը գտել է, որ դիմումը մերժելու կամ գործի վարույթը կարճելու հիմք է դիմող սուբյեկտի՝ նորմատիվ իրավական ակտի վերանայման պահանջով վարչական դատարան դիմելու իրավունքի բացակայությունը¹⁴:

Վերոգրյալ դիրքորոշումների լույսի ներքո հարկ ենք համարում անդրադառնալ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատարան դիմելու իրավունքը սահմանող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածով ամրագրված իրավակարգավորումներին: Նշված հոդվածի համաձայն՝ «նույն օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ՝

1) որևէ անհատական իրավական ակտով, բացառությամբ դատական ակտի, կամ որևէ ռեալ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա որևէ դրույթով) խախտվել են Սահմանադրության 2-րդ գլխով, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իր իրավունքները:

2) իրենց նկատմամբ չկիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա դրույթով) կարող են խախտվել նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված իրենց իրավունքները:

2. Նույն օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի նորմատիվ իրավական ակտով խախտվել են պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է դիմողի վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադատության կարգով:

3. Նույն օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող է դիմել նաև Մարդու իրավունքների պաշտպանը, ինչպես նաև Երևանի ավագանու խմբակցությունը՝ Երևանի ավագանու ակտերը վիճարկելու դեպքում:

4. Նույն օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարելի է դիմել նաև այն դեպքում, երբ նորմատիվ իրավական ակտը դիմելու պահին այլևս

¹³ Sūn Dainius Raižys, Darius Urbonas, “Legal issues concerning judicial control of the legality of normative administrative acts”, էջ 13:

¹⁴ Sūn Supreme Administrative Court of Lithuania, November 2003, Ruling administrative case No. A4 -1131-2003:

իրավաբանական ուժ չունեն, սակայն կիրառվել է դիմողի նկատմամբ որևէ անհատական, ներառյալ՝ դատական ակտով»:

Վերոգրյալ հոդվածից հետևում է, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման գործերով ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից դատարան դիմելու սուբյեկտային նախադրյալներն ընդհանուր առմամբ համընկնում են հայցային վարույթի կարգով դատարան դիմելու համար անհրաժեշտ սուբյեկտային նախադրյալներին, մասնավորապես՝ սույն վարույթի կարգով վարչական արդարադատություն կարող է հայցել միայն այն անձը, որն այդ գործով ունի դատարան դիմելու հարցում իրավական շահագրգռվածություն: Գործող իրավակարգավորումների պայմաններում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտներին կարելի է դասակարգել ըստ դատավարության ընթացքում հետապնդված շահի բնույթի: Այսպես՝ խնդրո առարկա վարույթի շրջանակում ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են դիմել դատարան եթե վերջիններիս նկատմամբ որևէ անհատական իրավական ակտով կամ ռեալ ակտով կիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա որևէ դրույթով) կամ իրենց նկատմամբ չկիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա դրույթով) կարող են խախտվել Սահմանադրության 2-րդ գլխով, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իրավունքները: Այսինքն՝ անհրաժեշտ պայման է անմիջականորեն վերջիններիս մասնավոր կամ անհատական շահերին միջամտությունը կամ դրա առաջացման իրական վտանգը: Հետևաբար, այս դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձինք առաջնահերթորեն հետապնդում են մասնավոր կամ անհատական շահ: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի՝ վարչական դատարավարության կարգով վիճարկման սուբյեկտիվ իրավունքը հետապնդում է ոչ միայն խախտված իրավունքների վերականգնման հետ կապված անհատական կամ մասնավոր շահ, այլ նաև հանրային կամ ընդհանուր շահ: Նկատի ունենալով, որ դատական պաշտպանության իրավունքի քննարկվող ձևն անմիջականորեն փոխկապակցված է անորոշ թվով անձանց համար վարքագծի պարտադիր կանոններ սահմանող ակտի իրավաչափության հետ, կարծում ենք, որ այն միշտ շոշափում է ինչպես մասնավոր (անհատական) շահը, այնպես էլ հանրային (ընդհանուր) շահը:

Անդրադառնալով նշված հատուկ վարույթի կարգով դատարան դիմելու իրավունք ունեցող մյուս սուբյեկտներին, այն է՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, Մարդու իրավունքների պաշտպանին և Երևանի ավագանու խմբակցությանը, կարծում ենք, որ նշված սուբյեկտները հետապնդում են հանրային կամ ընդհանուր շահ՝ երաշխավորելով իրավական պետությանը ներկայացվող օրինականության սկզբունքի ապահովման պահանջը:

Այս համատեքստում առանձնահատուկ արդիական է նաև նորմատիվ իրավական ակտի վիճարկման սուբյեկտիվ իրավունքի վերլուծությունը գործող վարչական դատավարության օրենսդրության և դատական պրակտիկայի համատեքստում: ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավակարգավորմանը, արձանագրել է, որ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել անձին վիճարկելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերը՝ միաժամանակ տարանջատելով այդպիսի հնարավորության ծագման համար հետևյալ հիմքերը.

վիճարկվող նորմատիվ իրավական ակտն անձի նկատմամբ կիրառվել է անհատական

իրավական ակտով կամ ռեալ ակտով, ինչի արդյունքում խախտվել են վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իրավունքները,

նորմատիվ իրավական ակտն անձի նկատմամբ չի կիրառվել, սակայն դրանով կամ դրա դրույթով կարող են խախտվել վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իր իրավունքները¹⁵:

Վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից բխում է, որ սույն վարույթի շրջանակներում դատարան դիմելու իրավունքի իրացման նախապայմաններից է ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար վերջինիս նկատմամբ որևէ անհատական իրավական ակտով կամ ռեալ ակտով տվյալ նորմատիվ իրավական ակտի (դրա որևէ դրույթի) կիրառումը, որով խախտվել են Սահմանադրության 2-րդ գլխով, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իր իրավունքները, իսկ նորմատիվ իրավական ակտն անձի նկատմամբ կիրառված չլինելու դեպքում այդ իրավունքների խախտման իրական վտանգը: Հարկ է ընդգծել, որ օրենսդիրը միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում է կիրառել «ռեալ ակտ» եզրույթը: Մինչդեռ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասում, որով սահմանված են նույն օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում վարչական դատարան դիմելու ժամկետները, օրենսդիրը կիրառել է «վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) (...) կիրառումը (կատարումը) ապահովված գործողություն կամ անգործություն» ձևակերպումը:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում հավելել, որ շատ հաճախ հանրային իրավահարաբերություններում որպես հանրային իշխանության կրող կարող են հանդես գալ ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև պետության կողմից օրենքով պատվիրակված հանրային գործառույթ իրականացնող մասնավոր անձինք: Այսինքն՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառումը (կատարումը) ապահովված գործողությունը կամ անգործությունը կարող է իրականացվել ինչպես հանրային իշխանությունը կրող սուբյեկտների, այնպես էլ պետության կողմից օրենքով պատվիրակված հանրային գործառույթ իրականացնող մասնավոր անձանց կողմից: Հաշվի առնելով վերը նշվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի կարգավորման համատեքստը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 28.02.2017 թվականի թիվ ՍԴՈ-1354 որոշմամբ¹⁶ արտահայտած իրավական դիրքորոշումները նույն օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ՝ կարծում ենք, որ «վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) կիրառումը (կատարումը) ապահովված գործողություն կամ անգործություն» ձևակերպման գործածումը «ռեալ ակտ» եզրույթի փոխարեն առավել նպատակահարմար է, քանի որ այժմ ներպետական իրավական համակարգում «ռեալ ակտ» եզրույթը դիտարկվում է միայն որպես վարչական մարմինների կողմից դրսևորած արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Վերոգրյալի արդյունքում գտնում ենք, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափու-

¹⁵ Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6284/05/14 վարչական գործով 24.02.2017 թվականի որոշումը:

¹⁶ Տես ՀՀ Սահմանադրական դատարանի 28.02.2017 թվականի ՍԴՈ-1354 որոշումը:

թյան վիճարկման գործերով ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից դատարան դիմելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ սուբյեկտային նախադրյալներից է վերջիններիս նկատմամբ որևէ անհատական իրավական ակտով տվյալ նորմատիվ իրավական ակտի (դրա որևէ դրույթի) կիրառումը կամ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) կիրառումը (կատարումը) ապահոված գործողությունը կամ անգործությունը, որով խախտվել են Սահմանադրության 2-րդ գլխով, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իր իրավունքները:

Հիշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում անհրաժեշտ է նշել, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման վերաբերյալ դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը հետևյալն է՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, Մարդու իրավունքների պաշտպանը և Երևանի ավագանու խմբակցությունը: Մինչդեռ նշված վարույթի կարգով դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը սահմանափակ է, ուստի անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վերաբերյալ դիմում ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակի ընդլայնման հարցը՝ ապահովելու համար վարչական մարմնի գործունեության նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետությունը:

Հաշվի առնելով խնդրո առարկա հատուկ վարույթի դերը և բարձր հանրային նշանակությունը՝ կարծում ենք անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նաև դատարան դիմելու իրավունքը՝ ներքոհիշյալ սուբյեկտներին վերապահելու հարցը:

Ա. ՀՀ Սահմանադրական դատարանը 07.09.2010 թվականի ՍԴՈ-906 որոշմամբ անդրադարձել է ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարանի մատչելիության իրավունքի հարցին և ամրագրել է հետևյալը. «Բոլոր դեպքերում, ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Բացառիկ կանոն է ուրիշի խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքը, որի իրացման դեպքերի և կարգի սահմանումը բացառապես օրենսդիր մարմնի իրավասության հարց է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինս և, մասնավորապես, դրա 3-րդ հոդվածը շահագրգիռ հասարակական կազմակերպությունների առնչությամբ չի սահմանել ուրիշի խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը: (...) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով «actio popularis» բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության արդյունավետությանը, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող՝ հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպությունները:

րին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը»¹⁷:

Հարկ է նաև ընդգծել, որ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն մեծապես կարևորելով վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության էական տարր, 2004 թվականի դեկտեմբերի 15-ին ընդունել է «Վարչական ակտերի դատական վերահսկողության վերաբերյալ» (2004) 20 հանձնարարականը, որի 2-րդ (a) կետում ամրագրված է. «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերանայումը պետք է հասանելի լինի առնվազն ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնց իրավունքների կամ շահերի վրա դրանք ուղղակիորեն ազդում են: Անդամ պետություններին խրախուսվում է ուսումնասիրել, թե արդյոք դատական վերանայումը հասանելի է նաև այն ասոցիացիաների կամ այլ անձանց և մարմինների համար, որոնք լիազորված են պաշտպանել կոլեկտիվ կամ համայնքային շահերը»¹⁸:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հրամայականով է պայմանավորված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածում կատարված լրացումը, որի համաձայն՝ հասարակական կազմակերպությունները վարչական դատարան կարող են դիմել նաև նույն օրենսգրքի 29.3-րդ գլխով նախատեսված դեպքերում: Հասարակական կազմակերպությունների կողմից պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի պաշտպանության գործառույթն անմիջականորեն փոխկապակցված է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթաօրենսդրական ակտերը վիճարկելու իրավունքի առկայության հետ: Հասարակական կազմակերպություններին նշված վարույթի շրջանակում դատարան դիմելու իրավունքի ընձեռնումն առավելապես կնպաստի վերջիններիս օրենքով վերապահված իրավունքների գործնականում ռեալիզացմանը: Այսպես՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝ օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

Հաշվի առնելով վերոգրյալ դիրքորոշումները՝ կարծում ենք, որ արդարացված կլինի հասարակական կազմակերպություններին ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան դիմելու իրավասություն վերապահելը:

Բ. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 2018 թվականի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ), ի թիվս այլնի, առաջարկվել է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վարույթի շրջանակում դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների մեջ ներառել նաև ՀՀ արդարադատության նախարարությանը¹⁹:

¹⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010 թվականի ՍԴՈ-906 որոշումը:

¹⁸ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի դատական վերանայման վերաբերյալ» թիվ (2004)20 հանձնարարականը: Հարկ է նշել, որ նույն հանձնարարականի համաձայն՝ վարչական ակտ հասկացությունը ներառում է թե՛ անհատական և թե՛ նորմատիվ իրավական ակտերը:

¹⁹ Տե՛ս «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ

Այս համատեքստում հարկ է նշել, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման վարույթն էական նշանակություն ունի օրենսդրության կատարելագործման և իրավունքի գերակայության ապահովման գործընթացում: Վերջինս գործուն կառուցակարգ է Սահմանադրության 5-րդ հոդվածով ամրագրված իրավական նորմերի աստիճանակարգության ապահովման տեսանկյունից, որի համաձայն՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրական օրենքներին և օրենքներին: Օրենսդիրը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության ապահովման համար «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանել է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերի պարտադիր փորձաքննություն, այդուհանդերձ, նախարարության կողմից փորձաքննության արդյունքում տրված բացասական եզրակացությանը չհամաձայնելու դեպքում ակտը կարող է ուղարկվել հրապարակման՝ գրավոր տեղյակ պահելով նախարարությանը: Միևնույն ժամանակ, օրենսդիրը նախատեսել է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի իրավաչափության վիճարկման գործիքակազմ՝ որպես հակակշռող գործիք: Այսպես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե նախարարությունը գտնում է, որ հրապարակված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը չի համապատասխանում Սահմանադրության կամ նույն օրենքի պահանջներին, ապա դիմում է դատարան՝ նույն օրենքի պահանջների խախտմամբ ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու համար:

Հարկ է նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումը ամրագրված է եղել նաև նախկինում գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի²⁰ 33-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերությունում: Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վարույթի շրջանակում դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների մեջ ՀՀ արդարադատության նախարարությանը ներգրավելը հիմնավորվել է այն հանգամանքով, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով արդեն իսկ սահմանված է նշված օրենքի պահանջների խախտմամբ ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու համար ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարչական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը:

Որպես պետական մարմին՝ ՀՀ արդարադատության նախարարությունը խնդրո առարկա վարույթի շրջանակներում ներկայումս կարող է դիմել ՀՀ վարչական դատարան միայն այն դեպքերում, երբ համարում է, որ վարչական մարմնի նորմատիվ իրավական ակտով խախտվել են պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է դիմողի վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադատության կարգով: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ արդարադատության նախարարությանը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի վիճարկման պահանջով դատարան դիմելու իրավասությամբ օժտելը կոչված է ապահովելու վերջինիս առջև կանոնադրությամբ դրված նպատակների իրագործումը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման ապահովումը:

Այսպես՝ ՀՀ արդարադատության նախարարությունը որպես պետական մարմին քննարկվող վարույթի շրջանակներում ներկայումս կարող է դիմել ՀՀ վարչական դատարան միայն սահմանափակ դեպքերում, ուստի կարծում ենք, որ առավել նպատակահարմար է առանձին

օրենքի 2018 թվականի նախագիծը: <https://www.e-draft.am/projects/1430/justification>

²⁰ Տես ՀՀ ՊՏ 2002.05.21/15(190) հոդ.344: Ընդունվել է 03.04.2002 թվականին, ուժի մեջ է մտել 31.05.2002 թվականին և ուժը կորցրել է 07.04.2018 թվականին:

դրույթով նախատեսել ՀՀ արդարադատության նախարարության նշված հատուկ վարույթի շրջանակում ՀՀ վարչական դատարան դիմելու իրավասությունը՝ ապահովելով օրենսդրությամբ նշված մարմնին տրված լիազորության իրացման համար անհրաժեշտ մեխանիզմը:

Գ. Նախագծով առաջարկվել է նաև նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման դիմումով դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքում ներգրավել դատարաններին, երբ նրանք հիմնավոր կասկածներ ունեն իրենց կողմից կիրառման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի իրավաչափության վերաբերյալ²¹: Դատարաններին նման իրավունքի վերապահումն անշուշտ կարող է քննադատության առարկա հանդիսանալ, ուստի նշված հոդվածի շրջանակում կփորձենք բացահայտել դրա խնդրահարույց կողմերը:

Նշված առաջարկը Նախագծով հիմնավորվել է այն հանգամանքով, որ դատարանները չունենալով իրենց վարույթում քննվող գործի շրջանակում կիրառվելիք ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը վիճարկելու գործիքակազմ և միաժամանակ իրավասու չլինելով ինքնուրույն գնահատել դրա իրավաչափությունը, ստիպված են լինում կիրառել այն, իսկ հետագայում կիրառված նորմատիվ իրավական ակտի անվավեր ճանաչման դեպքում գործը ենթակա է վերաբացման նոր հանգամանքի ուժով, ինչը չի բխում դատավարական խնայողության և արդյունավետության սկզբունքներից:

Այդուհանդերձ, հարկ է հաշվի առնել, որ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին ատյանի ընդհանուր իրավասության, մասնագիտացված և վերաքննիչ դատարաններին, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանին ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վերաբերյալ վարչական դատարան դիմում ներկայացնելու լիազորությամբ օժտելը կարող է վտանգել վերջիններիս կողմից իրենց վարույթում գտնվող գործերի ողջամիտ ժամկետում քննությունը: Ավելին՝ հիմնական խնդիրն այն է, որ դատարաններին ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի իրավաչափության վերաբերյալ վարչական դատարան դիմում ներկայացնելու լիազորությամբ օժտելը հակասում է Հայաստանի Հանրապետությունում գործող դատական ատյանների աստիճանակարգությանը: Ըստ Նախագծի տրամաբանության՝ Վերաքննիչ վարչական դատարանը և ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատը ևս կարող են դիմել վարչական դատարան՝ իրենց վարույթում քննվող գործի շրջանակում կիրառվելիք ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի վիճարկման դիմումով: Նշված դիմումի քննության արդյունքում վարչական դատարանի կողմից կայացված որոշումը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով, իսկ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշումը՝ վճռաբեկության կարգով: Արդյունքում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը և ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատը քննարկելու և լուծելու են իրենց իսկ դիմումի քննության արդյունքում վարչական դատարանի կողմից կայացված որոշման կամ դրա՝ վերաքննության կարգով բողոքարկման արդյունքում կայացված որոշման իրավաչափության հարցը: Կարծում ենք, որ նման կարգավորումը բավականին խնդրահարույց է և հայրենական դատավարագիտության համար բավականին խորթ իրավիճակ կարող է ստեղծել, քանի որ այդ պարագայում դատարանը դառնում է վարչական դատարան դիմում ներկայացնելու, վերաքննիչ ու վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող և միաժամանակ իր իսկ բողոքը քննելու իրավասություն ունեցող սուբյեկտ:

Այսպիսով, դատարաններին նորմատիվ իրավական ակտի իրավաչափության վերաբերյալ վարչական դատարան դիմում ներկայացնելու իրավասությամբ օժտելու անհրաժեշտությունը կարծում ենք բացակայում է: Ընդ որում, վերը նշված խնդիրը կարող է լուծվել այնպի-

²¹ Տե՛ս նույն տեղում:

սի կառուցակարգի հետևողական իրացման միջոցով, որի համաձայն դատարաններն իրենց կողմից քննվող ցանկացած գործով իրավասու են չկիրառելու այս կամ այն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը, եթե գտնում են, որ առկա է հակասություն այդ ակտի և օրենքի միջև՝ հիմնավորելով իրենց դիրքորոշումը:

Դ. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 3-րդ մասով դատարան դիմելու իրավունք է վերապահվում միայն Երևանի ավագանու խմբակցությունը՝ Երևանի ավագանու ակտերը վիճարկելու դեպքում: Նախատեսելով միայն Երևանի ավագանու խմբակցության՝ վարչական դատարան դիմելու իրավունքը՝ օրենսդիրը զրկել է մյուս համայնքների ավագանիների խմբակցություններին իրենց համայնքների ավագանիների ընդունած ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը վիճարկելու հնարավորությունից: Նման կարգավորումը լիարժեք չէ և չի ապահովում Հայաստանի Հանրապետություն մյուս համայնքների ավագանիների խմբակցությունների՝ ավագանու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը վիճարկելու իրավասությամբ դատարան դիմելու իրավունքը: Ուստի անհրաժեշտ է նման իրավասություն տրամադրել նաև Հայաստանի Հանրապետության մյուս համայնքների ավագանիների խմբակցություններին:

Այսպիսով, նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարույթի սուբյեկտային շրջանակի առանձնահատկությունների և դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնադրույթների համակարգային վերլուծության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ

1. *Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատարան դիմելու իրավունքի իրացման առաջնահերթ նախադրյալը օրենսդրությամբ անձին նման իրավունքի վերապահումն է:*

2. *Ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի՝ վարչական դատարավարության կարգով վիճարկման սուբյեկտիվ իրավունքը հետապնդում է ոչ միայն անհատական կամ մասնավոր շահ, այլ նաև հանրային կամ ընդհանուր շահ, քանի որ դատական պաշտպանության իրավունքի նշված ձևն անմիջականորեն փոխկապակցված է անորոշ թվով անձանց համար վարքագծի պարտադիր կանոններ սահմանող ակտի իրավաչափության հետ:*

3. *Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատարան դիմելու իրավունք ունեցող մյուս սուբյեկտները, այն է՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, Մարդու իրավունքների պաշտպանը և Երևանի ավագանու խմբակցությունը հետապնդում են հանրային կամ ընդհանուր շահ՝ երաշխավորելով իրավական պետությանը ներկայացվող օրինականության սկզբունքի ապահովման պահանջը:*

4. *Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային իրավահարաբերություններում որպես հանրային իշխանության կրող կարող են հանդես գալ ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև պետության կողմից օրենքով պարփակված հանրային գործառույթ իրականացնող մասնավոր անձինք՝ կարծում ենք, որ «ոեալ ակտ» եզրույթի փոխարեն «վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) կիրառումը (կատարումը) ապահոված գործողություն կամ անգործություն» ձևակերպման գործածումը առավել նպատակահարմար է:*

5. *Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարույթի գործնական կիրառելիությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ընդլայնել դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը, դրանում ներա-*

ռելյով՝ հասարակական կազմակերպություններին, ՀՀ արդարադատության նախարարությանը և համայնքների ավագանիների խմբակցություններին:

6. Անդրադառնալով նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման գործերով դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքում դատարանների ներգրավմանը՝ գտնում ենք, որ դատարաններին նման իրավունքի վերապահումը հակասում է Հայաստանի Հանրապետությունում գործող դատական արյանների աստիճանակարգությանը և գործնականում կարող է առաջացնել այնպիսի խնդրահարույց իրավիճակներ, երբ դատարանը դառնում է վարչական դատարան դիմում ներկայացնելու, վերաքննիչ և վճարել բողոք բերելու իրավունք ունեցող և միաժամանակ իր իսկ բողոքը քննելու իրավասություն ունեցող սուբյեկտ:

Annotation. This article is devoted to the issue of exercising the right to apply to a court in cases of challenging the legality of normative legal acts. In particular, as a result of this research, the necessary prerequisites were emphasized for applying to the Administrative Court on cases of challenging the legality of normative legal acts. In addition, this paper discusses the issue of expanding the scope of entities entitled to apply to the court in the mentioned cases. Accordingly, the issues of the possibility of granting certain subjects the right to a court were discussed, and respective conclusions were made on each of them.

Аннотация. Настоящая статья посвящена проблемам реализации права на обращение в суд по делам об оспаривании законности нормативно-правовых актов. В результате данного исследования были выделены необходимые предпосылки для обращения в Административный суд. Кроме того, в данной работе рассматривается вопрос о расширении круга субъектов, имеющих право на обращение в суд в порядке рассматриваемого особого производства. В соответствии с этим, обсуждался вопрос о возможности предоставления некоторым субъектам права на обращение в суд, и по каждому из них были сделаны соответствующие выводы.

Բանալի բառեր - նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկում, դատարան դիմելու իրավունք, սուբյեկտային նախադրյալներ, վարչական դատավարություն:

Keywords: *challenging the lawfulness of normative legal acts, right to a court, subjective prerequisites, administrative procedure.*

Ключевые слова: *оспаривание законности нормативных правовых актов, право на обращение в суд, субъективные предпосылки, административное судопроизводство.*

ԴԻԼԲԱՆԴՅԱՆ Օ. - ՀՀ վճարել դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, էլ. հասցե՝ oksana.dilbandyan96@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 07.07.2022 թ., տրվել է գրախոսության 07.07.2022 թ., երաշխավորվել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Վ. Հովհաննիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 26.07.2022 թ.: